

Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի 29.04.2021թ. թիվ 02/21/03 որոշում

1. «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ «Բանկ») 2020 թվականի ֆինանսական արդյունքներով ձևավորված զուտ շահույթից տարեկան շահութաբաժիններ /այսուհետ՝ «Տարեկան շահութաբաժիններ»/ չվճարել/չբաշխել:
2. Սույն որոշման 1-ին մասն ուժի մեջ է մտնում 2021թ. դեկտեմբերի 31-ին պայմանով, եթե մինչև այդ Բանկի բաժնետերերի ժողովի կողմից չի կայացվել Տարեկան շահութաբաժիններ բաշխելու/վճարելու վերաբերյալ որոշում:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի 27.05.2020թ. թիվ 01/20/03¹ որոշում

1. «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ «Բանկ») 2019 թվականի ֆինանսական արդյունքներով ձևավորված զուտ շահույթից տարեկան շահութաբաժիններ /այսուհետ՝ «Տարեկան շահութաբաժիններ»/ չվճարել/չբաշխել:
2. Սույն որոշման 1-ին մասն ուժի մեջ է մտնում 2020թ. դեկտեմբերի 31-ին պայմանով, եթե մինչև այդ Բանկի բաժնետերերի ժողովի կողմից չի կայացվել Տարեկան շահութաբաժիններ բաշխելու/վճարելու վերաբերյալ որոշում:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի 29.04.2019թ. որոշում թիվ 02/19/02²

«Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) 2018 թվականի Արտաքին աուդիտի ենթարկված հաշվետվությունների համաձայն հաստատել Բանկի զուտ շահույթը 10.502.444.000 /տասը միլիարդ հինգ հարյուր երկու միլիոն չորս հարյուր քառասունչորս հազար/ ՀՀ դրամի չափով, որից.

- 2,100,000,000 /երկու միլիարդ մեկ հարյուր միլիոն/ ՀՀ դրամը բաշխել որպես շահութաբաժին /վճարման համար սահմանված պայմանների և կարգի պահպանմամբ/³
- 526,000,000 /հինգ հարյուր քսանվեց միլիոն/ ՀՀ դրամն ուղղել Բանկի գլխավոր պահուստին:

¹ **Կարևոր նշում:** 2019 թվականի ֆինանսական արդյունքներով ձևավորված զուտ շահույթը Բանկի Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի կողմից 27.05.2020թ. կայացված թիվ 01/20/03 որոշմամբ նշված պայմանների վրա չհասնելու հիմքով չի վճարվել/չի բաշխվել:

² 2018 թվականի ֆինանսական արդյունքներով ձևավորված զուտ շահույթի մի մասը Բանկի Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի կողմից 29.04.2019թ. կայացված թիվ 02/19/02 որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում նշված պայմանների վրա չհասնելու հիմքով չի վճարվել/չի բաշխվել:

³ 2018 թվականի համար մեկ բաժնետոմսի մասով շահութաբաժին մեծությունը կազմում է 17,993 /տասնյոթ հազար ինը հարյուր ինսուններեք/ ՀՀ դրամ, իսկ 2017 թվականի համար՝ 9,849 /ինը հազար ութ հարյուր քառասունինը/ ՀՀ դրամ:

Տարեկան շահութաբաժին վճարելու դեպքում ամբողջ գործընթացի կատարումն ապահովել Բանկի Տնօրինության նախագահ-Գլխավոր տնօրենի հսկողությամբ՝ միանվագ կամ մաս-մաս փոխանցմամբ, պայմանով, որ դա չի հանգեցնի Բանկի կողմից օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտմանը:

Տարեկան շահութաբաժին վճարելու դեպքում՝ վճարել Բանկի այն մասնակիցներին, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում՝ տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ՝ ըստ կանոնադրական կապիտալում մասնակցության համամասնության:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

Բաժնետերերի Տարեկան Ընդհանուր Ժողովի 30.04.2018թ. թիվ 02/18/02 որոշում

1. «Ամերիաբանկ» ՓԲԸ (այսուհետ՝ Բանկ) 2017 թվականի Արտաքին աուդիտի ենթարկված հաշվետվությունների համաձայն հաստատել Բանկի զուտ շահույթը 7,649,987,000 /յոթ միլիարդ վեց հարյուր քառասունհինգ միլիոն ինը հարյուր ութսունյոթ հազար/ ՀՀ դրամի չափով, որից.
 - 1.1. 1.1.1,148,000,000 /մեկ միլիարդ մեկ հարյուր քառասունուր միլիոն/ ՀՀ դրամը բաշխել որպես շահութաբաժին⁴,
 - 1.2. 385,000,000 /երեք հարյուր ութսունհինգ միլիոն/ ՀՀ դրամն ուղղել Բանկի գլխավոր պահուստին:
2. Տարեկան շահութաբաժնի վճարման ամբողջ գործընթացի կատարումն ապահովել Բանկի Ֆինանսական տնօրենի հսկողությամբ՝ միանվագ կամ մաս-մաս փոխանցմամբ մինչև 31.07.2018թ. ներառյալ, պայմանով, որ դա չի հանգեցնի Բանկի կողմից օրենսդրական և պայմանագրային պարտավորությունների խախտմանը:
3. Տարեկան շահութաբաժինները վճարել Բանկի այն մասնակիցներին, որոնք ընդգրկվել են Բանկի մասնակիցների ռեեստրում՝ տարեկան ընդհանուր ժողովին մասնակցելու իրավունք ունեցող մասնակիցների ցուցակը կազմելու օրվա դրությամբ՝ ըստ կանոնադրական կապիտալում մասնակցության համամասնության:

Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվան հաջորդող օրվանից:

⁴ 2017 թվականի համար մեկ բաժնետոմսի մասով շահութաբաժին մեծությունը կազմում է 9,849 /ինը հազար ութ հարյուր քառասունհինգ/ ՀՀ դրամ, իսկ 2016 թվականի համար՝ 21,703 /քսանմեկ հազար յոթ հարյուր երեք/ ՀՀ դրամ: 2016 թվականի համար մեկ բաժնետոմսի մասով շահութաբաժնի մեծությունը կազմում է 21,703 /քսանմեկ հազար յոթ հարյուր երեք/ ՀՀ դրամ, իսկ 2015 թվականի համար՝ 16,807 /տասնվեց հազար ութ հարյուր յոթ/ ՀՀ դրամ: